

ԼԵՎՈՆ ՇԱՆԹԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԸ

1.

Գրական աշխարհաբարը մեզ երկու տարբերակներով է ներկայանում՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Սրանք լեզվական-կառուցվածքային ընդհանուր շատ գծեր ունեն, որ ժառանգել են հայոց լեզվի զարգացման նախորդ գոյավիճակներից՝ գրաբարից ու միջին հայերենից: Հայագետներն ապացուցել են, որ այդ տարբերակների ձևավորումը, դրանց տարրերը նույն 14-րդ դարից են արձանագրված երևում: Արևմտահայերենի յուրահատուկ գծերը գալիս են այսպես կոչված «կիլիկյան հայերենից»: 19-րդ դ. երկրորդ կեսին, երբ գրական արևելահայերենն ու արևմտահայերենը զգալապես ձերբազատվել էին գրաբարի կառուցվածքային տարրերից, նրանց լեզվական յուրահատկություններն ավելի հստակ էին երևում: Հ. Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» մեծարժեք աշխատությունը (Վիեննա, 1866) առավելաբար արևմտահայերենի լեզվական իրողությունների տեսական ու գործնական վերլուծությանն է նվիրված: Գնահատելի է, որ հմուտ լեզվաբանն աշխարհաբարի տարբերակների մեջ հաստ գիծ չի քաշում և մանավանդ դրանք իրար չի հակադրում, այլ ընդունում է իբրև պատմականորեն առաջ եկած լեզվական վիճակներ:

Նկատելի է նաև, որ 19-րդ դ. վերջին քառորդից սկսած՝ մի շարք մտավորականներ գրական աշխարհաբարի այդ երկու տարբերակները մերժեցնելու ներքին ցանկություն են ունեցել, այն իրականացնելու ջանքեր գործադրել: Մեր գրականության մեջ այդ ուղղությամբ առաջին ծախողված փորձը կատարել է վիպագիր Ծերենցը, որ իր կյանքի վերջին տարիները թիֆլիսում է անցկացրել: Նրա գործածած լեզուն արևմտահայերենի, գրաբարի և արևելահայերենի մի խառնուրդ է, որ

նկատելիորեն դժվարացնում է նրա գործերի ընթերցանությունը: Ահա հեղինակի նշանավոր «Երկունք Թ. դարու» պատմավեպի առաջին նախադասությունը. «Հայոց Յ. թվականին և Քրիստոսի թվական 851-ին սաստիկ ծանե *պատել էր* Տարոնոյ գավառը, դաշտը ծյունը *ծածկել ճերմկցուցել էր* բոլորովին, իսկ լեռը *ծյան* և *սառույցի* զանգված մ'եր ահարկու»:

Այստեղ ընդգծված *պատել էր, ծածկել (էր), ճերմկցուցել էր* արևել. բայաձևեր են (ճիշտ արևմտ. պիտի հնչեին՝ *պատեր...էր* կամ *պատած...էր*), *ծյան*-ը՝ արևմտահայերենում ոչ ընդունված հոլովածն (ճիշտը *ծյունի*): Արևմտահայերենում «սառույց» իմաստով գործածական է *սառ*: Հետաքրքրական է նկատել, որ *ճերմկցնել*-ն արևմտ. բառածն է (արևել. *ճերմակացնել* կամ *սպիտակացնել*). հեղինակի գրչի տակ այն վաղակատարի արևել. ձևն է առել:

Ռուբեն Սևակը Կովկասում բնավ չի ապրել, այստեղ չի էլ այցելել. ուրեմն արևելահայերենին գրականության միջոցով է ծանոթացել: Եվ նկատելի է, որ սիրել է իր չափածոյի մեջ երբեմն արևել. բառաձևեր, ու՝ ճեր մտցնել, ինչպես՝

- Ինչո՞ւ համար է մետաքսդ, *ա՛յ աղջիկ,*

Ինչո՞ւ համար է հառաչդ, հա՛յ աղջիկ:

Կամ՝

- Ես մի՞թե հարսնիք ունիմ, *աղբեր քան,*

Թե մեկնիմ տունես, մեռնի՛մ դավաճան: («Թըքուհին»)

Երևում է, սակայն, որ նա ավելի շատ սիրել է արևել. երկու ձևեր՝ *-ում* վերջավորությամբ ներգոյականը (արևմտահայերենն այս հոլովը չունի), մեկ էլ՝ *Ի-ով* վերջացող բառեր *Ո՛ւ-ով* հոլովելը.

Վտակն հոծեց.- «Թո՛ղ անդադրում

Վազեն ջուրերս, մի՛, մի՛ տրտում

Արցունք կաթեր անոնց *սրտում*: («Ցնծուն մահ»)

Թախծոտ է հոգիս, երկինքըս տրտում,

Բայց ծաղիկներուն անո՛ւյշ է բուրում,

Իմ սերըս դրի ես վարդի *խորքում*.

Ո՛վ դուք որ կ'անցնիք, պիտի քաղե՞ք զայն: (թարգմանություն)

Ծիշդ սերն ան է որ չես ըսեր

Բարեկամիդ ու *թշնամուդ*,

Կը մարես քու հետին լույսեր

Եվ կ'ամփոփվիս սրտիդ մեջ մութ:

Եհիշ սերն ա՛ն է որ չես ըսեր
 Վճիտ կերպով դուն քու *հոգուդ*...:
 Եհիշ սերն ա՛ն է որ չես ըսեր
 Յոգեհատոր քու *սիրելուդ*...: («Եհիշ սերը»)
 Միայն գիտես դուն խեղճությունդ անանուն,
 Գիտես *հոգուդ* ատելությունը անհո՛ւն...: («Շան հոգի»)

(«*Գյուղացու* սեր» վերնագրով բանաստեղծություն էլ ունի): Արևմտ. ընդունելի ձևեր պիտի լինեին համապատասխանաբար՝ *սիրտը, խորը, թշնամիիդ, հոգիիդ, սիրելիիդ, գյուղացիի*:

Սակայն ով որ Սևակին քիչ թե շատ ուշադիր կարդա, կնկատի, որ նա մտքով էլ չի անցկացրել աշխարհաբարի տարբերակները մերձեցնելու փորձ կատարել. պարզապես սիրել է արևել. մի քանի ձևեր (որոնք, հետաքրքրական է, նրա արձակում չկան):

Շանթն այս առումով մյուսներից բոլորովին տարբեր է:

Նախ՝ նա ժողովրդի արևելահայ հատվածի, նրա լեզվի ու գրականության հետ ի մոտո շփվել է: Հինգ տարի ուսանել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա տասը տարի ուսուցչություն արել Թիֆլիսում, Երևանում: Վերնատան գործուն անդամներից է եղել. այստեղ սերտորեն հարաբերել է Աղայանի, Իսահակյանի, Դեմիրճյանի և ուրիշների հետ, նաև աշխատակցել է Թումանյանին ու Ստ. Լիսիցյանին՝ *արևելահայ* դպրոցների համար «Լուսաբեր» դասագիրքը կազմելու: Կարևոր պաշտոններ է ստանձնել 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության օրերին...

Թերևս այս պատճառով է, որ իր գրչով էլ *նպատակադրված կերպով* ջանքեր է թափել արևմտահայերենի մեջ արևել. տարրեր մուծելու: Նայեցեք այս հատվածների լեզվին, որոնք քաղված են նրա «Դարձ» վեպից (գրված է Գևորգյան ճեմարանում ուսումնառությունն ավարտելուց հետո՝ 1897-ին, Մյունխենում)¹:

«-Բայց գիտե՞ս՝ միայն ուսումը *բանի պեսք չէ*, քիչ մը խորամանկություն ունենալու է և մեծավորներուն *կողքը* մտնելու *շնորհքը*, *թե չէ ոչինչ դուրս չի գար*, տասը տարի սարկավագ *կը պահեն*, վերջն ալ երբ մազերդ ճերմկին՝ *կը շինեն* վարդապետ *կ'ուղարկեն* փլած վանք մը» (էջ 266), «-...*Տեղին վրա* դուն *կապ կ'ունենաս* միայն մեկ կարևոր ու ազդեցիկ *ընկերոջ* մը հետ, որու միջոցով ձեռքդ *կը պահես* թելերը և առանց քու գիտությանդ ու հրահանգիդ *չի կատարվիր ոչինչ*: Ուրիշ խոսքով ամբողջ շրջանի կազմակերպության առանցքն ու ղեկավարը *կ'ըլլաս* դուն՝ առանց երբեք մեջտեղ երևալու» (229-230):

Ընդգծվածներից *բանի պետք չէ, դուրս չի գար* արևել. ոճեր են: *Ոչինչ դուրս չի գար* (ռուսերենից պատճենված - ничего не выйдет), *չի կատարվիր ոչինչ* «կրկնակ ժխտականները» խորթ էին գրաբարին, խորթ են արևմտահայերենին (ճիշտ ձևերը՝ *ոչինչ դուրս կու գա* կամ *կ'ըլլա, կը կատարվի ոչինչ*): *Կողք-ի, շնորհք-ի, ուղարկել-ի* փոխարեն արևմտ. ընդունված են *քով, շնորհ, դրկել*: *Կը պահեն, կը շինեն, կ'ուղարկեն, կապ կ'ունենաս, կը պահես, կ'ըլլաս* բայերի պարագային *ԿՐ* (Կ) եղանակիչով կազմված *ներկայի* ժամանակաձևերն *ապառնիի* իմաստով են գործածվել (արևմտ. ձևերը՝ *պիտի պահեն, պիտի շինեն...*): Արևմտ. քերականական կանոնների համաձայն՝ *տեղին վրա*-ի փոխարեն պիտի լիներ *տեղվույն վրա, ընկերոջ* փոխարեն՝ *ընկերի, որու և շրջանի* փոխարեն՝ *որուն, շրջանիմ*:

Լեզվական փաստերի ավելի հանգամանակից քննությունը սույն հոդվածի մյուս բաժիններին թողնելով՝ ուզում ենք արձանագրել, որ վերևում *նպատակադրված կերպով*-ն իզուր չընդգծեցինք: Պարզ երևում է, որ Շանթի գեղարվեստական խոսքի մեջ արևել. տարրերն ինչ-որ սպրդումներ չեն, այլ նրա միս ու արյունն են մի տեսակ կազմում: Ավելին՝ համարյա վստահ ենք, որ Շանթն արևել. մի շարք տարրեր ցանկացել է իր արևմտահայ ընթերցողներին, աշակերտներին սովորեցնել: Դրա պերճախոս ապացույցը կարող են լինել Բեյրութում մանկավարժական գործունեության ընթացքում նրա կազմած դասագրքերը:

Իբրև օրինակ վերցնենք «Հայերեն գրաւոր դասերը» (հրատարակություն Հայ Ճեմարանի, Բեյրութ, 1942): Ուշադրություն դարձրեք. «Ա տարի, Այբուբենէն անմիջապէս ետքը»: Այստեղ կարող եք գտնել արևմտահայերենում անգործածական, բայց արևելահայերենի համար սովորական մոտավորապես երկու տասնյակ բառեր, բառաձևեր ու բառիմաստներ, դրանցից շատերը՝ մեկից ավելի անգամներ օգտագործված, ինչպես՝

բ ա ռ ե ռ. լողանալ (լոգնալ), կողպել (կղպել), պատմիրել (ապսպրել), գնացք (շոգեկառք), կեղտոտ (աղտոտ), դասատու (ուսուցիչ), վերցնել (առնել), արտագրել (ընդօրինակել), տիկնիկ (պուպիկ), եփ գալ (եռալ, եփիլ), իսկը (ճի՛շդ)...

ա ռ տ ա հ ա յ տ ու թ յ ու ն ն ե ռ. կրկնել չտվալ, զանգը տվին (զանգակը զարկին՝ հնչեցուցին), ի՛նչ բան է (ի՛նչ է, ի՛նչ կ'ըլլա)...

ք ե ռ ա կ ա ն ա կ ա ն ծ և ե ռ. գծերուն (գիծերուն), գրքերս (գիրքերս), կրծքով (կուրծքով), ջրերուն (ջուրերուն), տան (տունին), շանը (շունին), կ'ուզե լվա (լվալ), անոնց պետք է հանգիստ ու երկար քուն (անոնք հանգիստ և երկար քունի պետք ունին): Նաև տրականաձև հայցա-

կանի, ներկա ժամանակաձևի՝ ապառնիի իմաստով գործածություններ, կրկնակ ժխտական (տե՛ս՝ ստորև):

2.

Շանթի գեղարվեստական խոսքի մեջ մուծված արևել. տարրերն ամենից առաջ *բառեր* են՝

ա) որոնք հաճախ հերոսների բերանն է դնում՝ նրանց խոսքին տիպական երանգավորում տալու համար.

«...Սեյ մըն ալ նայե՛ ինչ ճամբով կ'ուզե ըլլա՝ շուտով գրպաններդ յուրոտես, այս *չոլերուն* մեջ ճերմկած մորուքս քեզի խրատ» («Դարձ», 266-267), «Դեռ (տակավի՛ն) երկու շաբաթ չկա. տե՛ս ինչպե՛ս *շուռ տվալ* (դարձուց) ամենուն գլուխը. գինովցեր են» («Կայսր», 510), «...Իսկ այդ բոլորի (ամենուն) դրամը ատոմն *տոգած* (ուռած) քսակներուն մեջն է» («Շղթայվածը», 558), «...*Տավարի* (արջառի, կովու) *պոզերեն* (կոտոշներեն) որ *հուպ տաս* (ուծով սեղմես)՝ գետին *կը չոքին* (պիտի ծնկեն) եզն ու երիցը» (անդ, 560): Այսպես նաև՝ *իշացնել*, *թամաշա*, *ո՞նց*, *քավ-թառ*, *իծանները*, *մեխվածի պես*, *բռի* (574, 583, 637, 641, 661, 670, 758)...

բ) Ուրիշ բառեր օգտագործում է՝ դրանք կարծես թե անփոխարինելի համարելով: Սրանց մեջ ամենից հաճախ գործածվողը *հենց*-ն է՝ որ թարմատարի զուգադրությամբ կամ առանց դրա. «...Եկո՛ւր, *հենց* որ նորեն ջրերը (ջուրերը) հուզվին, *հենց* որ ծովը փրփրի» («Յին աստվածներ», 424), «...Ի՞նչ է գրված (գրված է) որ այդպես մթնեց, մռայլվեց (մթնեցավ, մռայլեցավ), *հենց տեսավ թե չե՛*» («Ինկած բերդի իշխանուհին», 637. հոմանիշներ են և արևել. ոճի տեսակետից համատեղ ոչ գործածելի), «...Ես, կը կարծես (գիտես թե) չե՞մ հասկնար, միթե դուն ինքդ (դուն ալ) չե՞ս զգար: *Յենց* (նույն) ի՛նքը, ի՛նքը, իշխանը» (անդ, 668):

Այս կարգի բառերից կարող են համարվել նաև՝ *հաջորդ* (մյուս. «Դուրսեցիները», 235), *թիկն տալ* (ընկողմանիլ. կռթնիլ), *հերթ* (կարգ. «Կայսր», 512, 513, 571), *ի զուր* (պարապ տեղը), *պահ* (զարմացական արտահայտություն), *քաշ տալ* (քաշքշել, գետինը քաշել), *նկուղ* (մառան. ներքնահարկ), *ցույց տալ* (ցուցնել). «Շղթայվածը», 553, 560, 574, 577, 578, 586), *կտրվիլ* (քննության մեջ ծախողիլ. «Դարձ», 274), *պարպմունք* (դաս. զբաղում. «Երազ օրեր», 108)...

գ) Երրորդներ արևմտ. հոմանիշների հետ զուգահեռաբար են գործածվում՝ *կարիք* - պետք, *աշխատանք* - գործ, *թողնել* - ձգել. «...Բայց ի՞նչ *կարիք ունեիր* այդքան հեռուները, հոս *աշխատա՞նք* է պակաս» («Դուրսեցիները», 240) - «Այլևս *պետք չունիս* ինձմով հետաքրքրվելու» (անդ, 242), «-Յեռացե՛ք, *գո՞րծ* է պակաս, ինչո՞ւ անպատճառ հոգևորա-

կան» («Դարձ», 263), «-Չեմ բողմեր որ խնդիրը այդչափ հեռու երթա» (անդ, 274, այլև՝ 539, 586, այլուր) - «-Չգե՛ հանգիստ: Շատ դժվար մոտենալու բան է աղջկան սիրտը...» («Կայսր», 475), «-...Ինչպե՛ս բռնել գիտես սրտիս *թույլ* թելերը, շոյել *տկար* կողմերը» («Ինկած բերդի իշխանուհին», 676), «-...Գրե՛ ու ստացի՛ր (ա՛ն) ինչքան *սիրտդ ուզեմա...*» («Ինկած բերդի իշխանուհին», 603) - «-...հայիոյե՛ ինչքան *սիրտդ ուզե՛*» (անդ, 621), «-*Մայրդ Աստծու*, նախ պետք է կռնակս ամրացնե՛ի՝ թե չէ» (անդ, 611) - «-...*Ա՛յ մարդ*, այս գիշեր տեսնենք հաղթանակին ծայրը...» («Օշին Պայլ», 734):

Այս կարգի բառերից են՝ *պինդ* («Կինը», 325) - ամուր, շուքն *անգամ* («Ինկած բերդի իշխանուհին», 596) - իսկ, *դուրս գալ* (անդ, 637) - ելլել, *սարքած* («Կայսր», 511) - ըրած, *ի հարկե* («Շղթայվածը», 556) - անշուշտ, *հարց* («Օշին Պայլ», 741) - խնդիր, *լիակատար* (անդ, 789) - ամբողջական, կատարյալ...

դ) Չորրորդները պարզապես նրա սիրած բառերը, ձևերը կամ արտահայտություններն են, ինչպես՝ *ոչի՛նչ* (հոգ չէ, բան մը չէ. «Դարձ», 259), *ունք* (հոնք. «Հին աստվածներ», էջ 396), *թույլ տալ* (թող տալ, արտոնել. «Կայսր», 446), *կորչիլ* (կորսվիլ. անդ, 495, 497, 499, 500), *թաքնված* (պահված, անդ, 501, այլև՝ «Ինկած բերդի իշխանուհին», 645), *վաղուց* (շատոնց. «Շղթայվածը», 517), *իսկի* (բնավ, երբեք. անդ, 521), *ախր* (չէ՞ որ. «Ինկած բերդի իշխանուհին», 637), թագավոր *դարձնել* (ընել. «Օշին Պայլ», 750, այլև «Դուրսեցիները», 230)...

Շանթի «սրտին մոտ» արտահայտություններից են՝ *լավն ան է* (աղեկը անկա է որ), *առաջին հերթին* (ամենն առաջ), *լավ մը* (աղեկ մը), *գործի կպչել* (գործին փակիլ. «Դուրսեցիները», 227, 229), *ինչ կը վերաբերի* (զալով-ին. «Դարձ», 275), *հողե՛մ գլուխդ* (հո՛ղս գլուխդ՝ գլխուդ. «Օշին Պայլ», 719), *իրեն անհարմար զգալ*, *ամեն բան իր անունով անվանել*, *ոտքերուն տակ հողը երերալ*, *քեզի պատկերացո՛ւր* («Երազ օրեր», 39, «Օշին Պայլ», 734, 737. վերջին չորսը՝ ռուսերենից պատճենված - чувствовать себя неловко, называть вещи своими именами, почва / земля уходит из-под ног, представь себе), *հարցնող ըլլա* («Շղթայվածը», 521, «Ինկած բերդի իշխանուհին», 602)...

3.

Նախորդ բաժնում բերված օրինակները վստահաբար արևելահայերենի այն տարրերը չէին, որոնք Շանթը պիտի ուզեր կամ ջանար արևմտահայերենին իբրև ընդունելի կառույցներ «պատվաստել»:

Այս առումով ուրիշ են քերականական ձևերը, կառույցները, որոնց մեծ մասն այնքան շատ է օգտագործել, որ, կարծում ենք, ցանկացել է դրանք տեսնել արևմտահայերենում:

ա) Օրինակ՝ *ինքը* դերանունը, միշտ *Ը*-ով, իբրև սաստկական. *դուն ինքը, ինքներդ*, նաև *իրար*, առանց *ՈՒ*-ի («Կինը», 460, «Օշին Պայլ», 710, «Շղթալվածը», 553):

բ) *Գիտեմ (գիտեի)* ժամանակաձևերի ժխտականը գրեթե միշտ *Զ*-ով՝ *չգիտեմ, չգիտեի* (փոխ. *չեմ գիտեր, չէի գիտեր*. «Դարձ», 265, 273, «Կայսր», 464 և այլուր)³:

գ) «խոնարհված բայ + խոնարհված բայ» կառույցը՝ միևնույն նախադասության մեջ (փոխ. «խոնարհված բայ + անորոշ դերբայ»-ի), մի բան, որ գրական արևելահայերենում էլ ընդունված չէ. «...Դե՛ ի հարկե որ *կ'ուզեն* կայսր *դառնա*» (դառնալ, ավելի ճիշտ՝ ըլլալ. «Կայսր», 466), «...Բայց ի՞նչ ընեմ, *կ'ուզեի* բան մը *տա*», «*կ'ուզեի* բան մը *ընե*», «*կ'ուզեի* բանով մը երախտապարտ *ըլլա*» (տալ, ընել, ըլլալ. «Յին աստվածներ», 367), «*Կ'ուզե երթա* (երթալ)՝ Աբեղան առաջ (հառաջ) կու գա ու ճամբան կը կտրե» (անդ, 430), «-Ո՞վ *կրնա տեսներ* (տեսնել) այդքան խորերը, ո՞վ *կրնա ըսեր* (ըսել) այդքան խորքերը» (անդ, 369)...

դ) *Ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ, ոչ մեկ բան* ժխտական դերանունների և համանման կառույցների հետ ժխտական բայաձև գործածելը (փոխ. դրականի). «-Կարդապե՛տ, այդ եկեղեցին *ոչ ոք* քանդել *չի կրնա*» (կրնա. «Յին աստվածներ», 416), «-...*Ոչ ոքի* հետ *չէ՛ տեսնվելու*» (պիտի տեսնվի. «Ինկած բերդի իշխանուհին», 638), «-...Եվ կյանքի մեջ, գիտցի՛ր, *ոչ մեկը չ'արժեր* (կ'արժե) քու այդ նվերիդ» («Կայսր», 472), «-...Ո՛չ, *չի՛ պիտի հպարտանա* (պիտի հպարտանա) *ոչ* իր խելքովը, *ոչ* շնորհքովը, *ոչ* իր զենքովը...» (անդ): Յմտ. «-...*Ոչ ոք գիտնա*, *ոչ* իր ըլլալը, *ոչ* իր անունը» («Ինկած բերդի իշխանուհին», 638), «Ստեկըն այլևս *ոչինչ չէր ըմբռներ*» (կ'ըմբռներ. «Կինը», 353), «-...Եվ *ոչ մեկ կերպով* դպրոցե դուրս *ոչ մեկ* գործի *չես մասնակցի*» (պիտի մասնակցիս. «Դուրսեցիները», 229)...

ե) Ներգործական բայերի հետ տրականաձև հայցականով ուղիղ խնդիր դնելը. «- *Գրկե՛ ինձի*» (գիս. «Դուրսեցիները», 225, նաև 226), «- Եկա *քեզի* (քեզ) *տանելու*: - *Ինձի*» (զի՛ս, ո՞ւր» (անդ, 229), «-...Քու բանակդ կը ճանչնա և կ'ընդունի միայն այն կառավարությունը, որը (որ) իրը ըլլա, իրեն գործակից, *իրեն* (զինք) *հասկցող*, իրմե ընտրված» («Կայսր», 446), «- *Թագավորին* (թագավորը) *կը սպասեն* դուրսը և ո՛չ

վարագույրներուն ետևը» («Օշին Պայլ», 786)⁶: Համտ. «...Եվ շատ խնդրեր էր որ շաբաթ *Լուիզը* իրենց տուն *տանի*» («Դուրսեցիները», 244):

Նման ձևերի գործածությունն այժմ շատ տարածված է մանավանդ խոսակցական արևմտահայերենում (և Սփյուռքի հայ դպրոցներում ուսուցիչներն անգոր պայքարում են դրա դեմ): Մինչդեռ քերականական այս տեղաշարժը գրական աշխարհաբարի տարբերակների մերձեցման ճանապարհին կարևոր, նշանակալից հանգրվան է:

զ) *ԿԸ / Կ՛ / ԿՈՒ* եղանակիչով կազմված ներկան ժամանակին հենց Շանթն է, որ ամենից շատ է (գրեթե ամեն էջում) ապառնիի իմաստով գործածել. «-Ա՛ռ, կարդա՛ *կը հասկնաս* (պիտի հասկնաս. «Դուրսեցիները», 237), «-...Ըսի որ երկու շաբաթը չի լրացած *կը լսեն* (պիտի լսեն) իմ մասին (իմ մասիս)» («Կայսր», 443), «-...Եթե գրված է որ պիտի մեռնիս այս գիշեր, հի՛մա, պահի՛կ մը ետքը՝ *կը մեռնիս*, ոչի՛նչ *չի փրկեր*» (պիտի մեռնի՛ս, պիտի չփրկե. անդ, 504), «-Քեզի հետ, իշխանուհի՛, ես կը զգամ որ պիտի հաջողիմ. ո՛չ մեկ Օշին Պայլ դեմս կտրել չի կրնար⁷, *կը խորտակեն*» (պիտի խորտակեն. «Օշին Պայլ», 727)⁸ ...

Ընդգծված բայերի կազմությունն ունեցող ձևերն ապառնիի իմաստով գործածելը թե՛ գրական, թե՛ խոսակցական արևմտահայերենում ներկայումս չափազանց տարածված է և հիմնավորապես արմատացած: Այսօր նախադասություններ կան, ուր այլ ձև կարծեք թե չի էլ կարող գործածվել: Օրինակ՝ «Եթե որևէ անպատեհություն չկա, ես ալ ձեզի հետ *կու գամ*»: Հմն կարծում, թե մեկն այստեղ *պիտի գամ* կասեր:

Քերականական այս տեղաշարժը ևս, ինչպես նախորդ կետում նկարագրվածը, հանգրվանային է գրական աշխարհաբարի տարբերակների մերձեցման ճանապարհին:

է) Արևմտահայերենում *-ելու / -ալու* վերջավորությամբ ապառնի դերբայով կազմված ժամանակածեղ, առավելաբար երրորդ դեմքի եզակիով, մի յուրահատուկ իմաստ է արտահայտում, ուրույն երանգ և կիրառություն ունի, որ՝ մոտավորապես այսպես կարելի է «թարգմանել»՝ «անհրաժեշտ է, որ», «պատշաճ է, որ», անգամ «պետք է, որ»: Համտ.

«-Շիտակ է, Թադեոս աղա, ձեր խոսքը *մտիկ ընելու էի* (= պետք է որ մտիկ ընեի, պետք էի մտիկ ընել. Երուխան, «Ամիրային աղջիկը»), «-Հէ՛, *առնելու փախցնելու, տանելու է* սա աղջիկը» (= պետք է առնել... նույն, «Սերինա»), «-...Քիչ մը խորամանկություն *ունենալու է...*» (= պետք է ունենալ. Շանթ, «Դարձ», 266)...

Վերջին օրինակը ցույց է տալիս, որ Շանթն էլ է այդ կառույցը դասական արևմտահայերենին բնորոշ իմաստով գործածում: Սակայն նրա գրվածքներում ավելի նկատելի է ապառնի ժամանակածեղ արևելահայերենում ընդունված՝ սահմանական եղանակի իմաստով կիրառություն-

ները, ավելին՝ այն արևմտ. խոսքի մեջ մուծելու ճիգը, ինչ որ վերջինիս մեջ ներդաշնակ չի հնչում (այստեղ *պիտի*-ն է նախընտրելի)։

«Այս որոշումներով մղված՝ իրիկվան դեմ դուրս ելա շրջելու (շրջիլ), հաստատ համոզված որ աղջկան *հանդիպելու էի* (պիտի հանդիպեի. «Երագ օրեր», 91), «Վստահ էի որ Վարդուհին միասին *է գալու*» (պիտի գար. անդ, 138), «...Դուն տիրե՛ս պիտի աշխարհներու. այդ բոլորը ըլլա՛ պիտի։ Բայց դուն ինձի (զիս) քու գահիդ *չե՛ս տանելու* (չպիտի՝ տանիս. «Կայսր», 496), «...*Հանգիստ չե՛ն տալու, խայթելու են* և մութին մեջ արմատները *կրծելու*» (անդ, 502), «...Բայց ասիկա *պատահելու էր* օր մը...» («Ինկած բերդի իշխանուհին», 649), «...Ամբողջ ժամանակ մեր աչքերը դրանն (դուռին) *է ըլլալու*, և մեր նետերը՝ մեր աղեղներուն» («Օշին Պայլ», 799)...

Այն աստիճան է խույս տալիս ապառնիի ձևն արևմտահայերենին հատուկ իմաստով գործածելուց, որ իր խոսքի մեջ երբեմն նույնիսկ արհեստական ձև է մուծում, որ ուրիշ տեղ մեզ չի հանդիպել. «...Ուրեմն...ուրեմն քու կարծիքովդ հիմա ի՞նչ *պետք է ըրվի*» (= արևել. պետք է արվի. «Ինկած բերդի իշխանուհին», 663)։ Այստեղ կարծեք թե անխուսափելի էր արևմտ. *ի՞նչ ընելու է* արտահայտությունը։

Արևելահայերեն ժամանակաձևն արևմտահայերենին «պատվաստելու» Շանթի այս ճիգերը ծախող փորձեր եղան. հետագայում ոչ ոք նրա ճանապարհով չբայլեց։

Այլապես, սակայն, անուրանալի է, որ Շանթը, շատ կարդացվող ու բեմադրվող մի հեղինակ լինելով, իր գործերի լեզվով ևս որոշակի դեր կատարեց արևմտահայերենի զարգացման գործընթացում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շանթից այս և հետագա բոլոր մեջբերումները կատարված են նրա «Երկերի» 1989 թ. երևանյան հրատարակությունից։

2. Քանի որ այս վերջին կանոնի (սեռական հոլովը որոշյալ առումով գործածելու) դեմ մեղանչումները Շանթի խոսքի մեջ հազվադեպ են, այստեղ մի քանի օրինակներ էլ ենք տալիս (այստեղ և ամենուր փակագծերի մեջ նշում ենք արևմտ. ընկալյալ ձևերը). «...*Բոլորի* (բոլորին, ամենուն) տրամադրությունը՝ բարձր, դժգոհությունները՝ հասած իրենց զագաթնակետին, *բոլորի* հույսը՝ դեպի մեզ» («Կայսր», 444), «...Կին ու աղջիկ իրենց *ձեռքի* (ձեռքին), իրենց *կրծքի* (կուրծքին) ծաղիկները կը նետեին ծիուղ ոտքերուն տակը...» (անդ, 478), «...Չէ՛ որ քեզի խոստացավ իր *տակի* (տակին) ձին, իր *ձեռքի* (ձեռքին) սուրը, իր սեփական աղջիկը...» («Հին աստվածներ», 421։ *Սեփական* բառի նման գոր-

ծածոթյունն արևելահայերեն է, ուր այն պատճենված է ռուսերենից – со-
ственною дочь), «Ընտրած էր *ծորի* (ծորին) ամեննն ժայռոտ ու ամեննն սեպ
շավիղներն մեկը...» («Դարձ», 276):

3. Հմմտ. «-Գիտեմ թե եսուկն է, բայց ճշմարիտն՝ ըրածը *չգիտեմ*» (Ս. Մա-
մուրյան, «Հայկական նամականի»):

4. Հմմտ. «...Պառկելու տեղերնին ալ *չեն կրնար երթար...*» (Հար. Սըվաճ-
յան, «Տեսանելի հառաջդիմությունը ազգին վրա»), «...*Ջանացեք* օր օրի ավելի
մաքուր հայերեն *խոսիք...*» (անդ):

5. Այսպիսի գործածություններ ուրիշների գործերում էլ են հանդիպում,
բայց որպես եզակի դեպքեր. «...եվ *ոչինչ չպիտի կրնա* շեղել զինքը իր նպա-
տակին հասնելու համար ընտրած ճանապարհէն» (Հար. Սըվաճյան, «1861
հունվար 1»), «...Հայելիին մեջ դեմքըդ հրակեզ Դիտելով երկար՝ կու լաս ու
կ'երգես, Թե ինչո՞ւ *ոչ ոք* դեռ *չի սիրել* քեզ...» (Ռուբեն Սևակ, «Իտեալ սեր»):

6. Այսպիսի գործածության էլ եզակի դեպքեր այլուր հանդիպում ենք. «Մա-
րիամ *առաջնորդեց* յուր *տիրուհվույն* դեպ փոքրիկ տնակ մի...» (Տյուսաբ, «Սի-
րանույշ»), «-Շո՛ւտ, Արշակ, վազե Թադեոս *աղային* (աղան) հոս *կանչե...*» (Ե-
րուխան, «Ամիրային աղջիկը»), «...*խըլեց ձեզի* (ձեզ), *հղկեց, մաքրեց* փառա-
վո՛ր...» (Ռուբեն Սևակ, «Դրամին աղոթքը»), «-*Առե՛ք ինձ* (զիս) ձեզ հետ...»
(նույն, «Թրուպատուրները»):

7. Տե՛ս «դ» ենթակետը:

8. Վերջին երկու նախադասություններում արևմտահայերենին բնորոշ ա-
պառնիներ էլ կան:

Ներկա ժամանակաձևի՝ ներկայացված իմաստով գործածությունների կա-
րելի էր դեռ Մամուրյանի, Սըվաճյանի երկերում հանդիպել. «...Վաղն այս կո-
թողներն ու շղթաները *կը խորտակին* և նոր տեսակ վարչություն մ'իր արբան-
յակներովն *երևան կ'ելնե...*» (Ս. Մամուրյան, «Հայկական նամականի»), «...Ավե-
լի հաստ և ավելի ամուր կապ մըն ալ *կու գա* վաղը ու ձեր *հոգին կը հանե...*»
(Հար. Սըվաճյան, «Մեր բողոքը...»), «-...Այդ հրեշտակ կինն սատանի մի գերին
եղած է, մինչդեռ ինձնով գերերջանիկ *կ'ըլլաթ*» (Տյուսաբ, «Սիրանույշ»):